




«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն  
 Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,  
 E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

HQ-17-06/13



Հարգելի՛ արն. Գյոզալյան

20.06.2017թ. ՀՀ Արագածոտնի մարզպետ  
 Գարրիել Գյոզալյանին  
 էլ. հասցե՝ [marzpet.aragatsotn@mta.gov.am](mailto:marzpet.aragatsotn@mta.gov.am);  
[aghektegh.aragatsotn@mta.gov.am](mailto:aghektegh.aragatsotn@mta.gov.am);  
[s.tadevosyan@mta.gov.am](mailto:s.tadevosyan@mta.gov.am);  
[s.ghukasyan@mta.gov.am](mailto:s.ghukasyan@mta.gov.am)


Ինչպես գիտեք, «Հետք» էլեկտրոնային թերթն ուսումնասիրում է ՀՀ մարզերի դպրոցների շենքային պայմանները: Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքային համայնքի Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի վերաբերյալ 2016թ. դեկտեմբերի 19-ին հրապարակվել է «Աշտարակ. կաթսայատունը, հանդիսությունների դահլիճն ու գրադարանը դարձել են դասասենյակ» (տե՛ս հղումը՝ <http://hetq.am/arm/news/73936/asharak-katsayatumy-handisutyuneri-dahlitchn-u-gradarany-dardzel-en-dasasenyak.html>), իսկ 2017թ. մայիսի 4-ին՝ «Ուսուցիչները գործադուլ են անում. «Աշակերտների ապագային մատների արանքով չենք նայում» նյութերը (տե՛ս հղումը՝ <http://hetq.am/arm/news/78411/usucichnery-gortsadul-en-anum-ashakertneri-apagayin-matneri-aranqov-chenq-nayum.html>), որտեղ ներկայացված է Աշտարակ քաղաքի այս դպրոցի անմխիթար վիճակը: Այս հրապարակումներին արձագանքել էր Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, որի վերաբերյալ նյութի հղումը սա է՝ <http://hetq.am/arm/news/78515/mip-shenqayin-paymanneri-antuylatreli-vitchakn-eakan-khochyndot-e-erekhaneri-krtutyany-iravunqi-iracman-hamar.html> : Ա.թ. ապրիլի 18-ին մեկ այլ նյութ էր հրապարակվել մարզի եզրիարևակ Հակոբ համայնքի դպրոցի վերաբերյալ (տե՛ս հղումը՝ <http://hetq.am/arm/news/77899/qamuc-pokvats-taniqi-tak-sovorox-erekhanery-ev-goh-u-shnorhakal-tnoreny.html> ):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Մարզպետարանը քննարկման առարկա դարձրե՞լ է «Հետքի»՝ վերոհիշյալ հրապարակումները: Եթե այո, ի՞նչ քայլեր են ձեռնարկվում: Եթե ոչ՝ ինչո՞ւ: Մասնատրապես՝
2. Արդյո՞ք միջոցներ հատկացվել են Հակոբ գյուղի դպրոցի տանիքը վերանորոգելու և շենքային պայմանները բարելավելու համար.
  - (ա) Ի՞նչ աշխատանքներ են նախատեսվում իրականացվել մինչև ս.թ. սեպտեմբեր ամիսը և որքա՞ն գումար է հատկացվել:
  - (բ) Եթե չի նախաձեռնվել ոչինչ, խնդրում եմ բացատրել՝ ինչո՞ւ:

3. Ի՞նչ լուծումներ են առաջարկվում Արագածոտն մարզի Աշտարակ քաղաքի Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի ուսուցիչների կողմից բարձրացված խնդիրներին. ի՞նչ քայլեր են ձեռնարկվել մինչև սեպտեմբեր իրավիճակը բարելավելու ուղղությամբ: Եթե չեք նախաձեռնել ոչինչ, խնդրում եմ նշել, թե ինչո՞ւ:

Հարգանքով՝



Է. Բաղդասարյան  
«Հետաքննող լրագրողներ» հ/կ նախագահ,  
«Հետք» թերթի գլխ. խմբագիր



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51  
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51  
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

\_\_\_\_\_ N \_\_\_\_\_

Ի պատասխան Ձեր՝ 21.06.2017թ.գրության

<<Հետաքննող լրագրողների>> ՀԿ

նախագահ Է. Բաղդասարյանին

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ Արագածոտնի մարզի

- ✓ Հակոբյի հիմնական դպրոցի շենքի տանիքի մի մասը վերանորոգվել, մյուս մասն ամբողջովին փոխվել է: Կառուցվել է նաև սանհանգույց: Աշխատանքների ընդհանուր գումարը կազմել է 1 150,0 դրամ:
- ✓ Աշտարակ քաղաքի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի հիմնանորոգումն ընդգրկված է մարզի 2018-2020 թվականների պետական բյուջեի հաշվին նախատեսվող կապիտալ ծախսերի ծրագրում: Քննարկվել և համաձայնություն է ձեռքբերվել նաև, որպեսզի դպրոցի հիմնանորոգումն ընդգրկվի 2017 թվականին Հայաստանի Հանրապետությունում հիմնանորոգվող շուրջ 8 դպրոցների ցանկում՝ ֆինանսական այլ միջոցներով, ուստի, համապատասխան ֆինանսավորման դեպքում՝ <<Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի>> հիմնանորոգումը կսկսվի 2017 թվականին:

Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ